

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-328-11.06.2018-ՊԻՄԻ-011/1,
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-3281-
11.06.2018-ՊԻՄԻ-011/1 ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՐ**

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ [ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ](#) ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ մասով.

«4. Անձը չի կարող նույն հիմքով կրկին անգամ ապաստան հայցել, [բացառությամբ սույն օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի](#):»:

Հոդված 2. Օրենքի 47-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1. Հայաստանի Հանրապետության պետական սահմանն ապօրինի հատած կամ օտարերկրյա պետությանը հանձնման ենթակա օտարերկրացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, ում ազատությունը օրենքով սահմանված կարգով սահմանափակված կամ ով ազատությունից զրկված է կամ ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, դիմում է ապաստանի կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ժամուցման պահից [20 օրվա ընթացքում](#): Սույն մասում նշված [անձանց արգելանքի վերցնելուց հետո](#) անհապաղ իրենց հասկանալի լեզվով, այդ թվում՝ գրավոր, պարզաբանվում է ապաստանի կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար դիմելու վերջիններիս իրավունքը և ապահովում դրա իրացումը:»:

Deleted: 15
Deleted: օրացուցային

Հոդված 3. Օրենքի 52-րդ հոդվածի 8-րդ մասի առաջին նախադասությունը «երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է ապաստան հայցողին» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն օրենքի 52.1 հոդվածի 7-րդ մասում նախատեսված դեպքի» բառերով:

Հոդված 4. Օրենքի 52.1 հոդվածում՝
1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3-րդ կետով.

«3) ներկայացված են սույն օրենքի 47-րդ հոդվածի 2.1 մասում նախատեսված սուբյեկտների կողմից».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս՝

«7. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով հարուցված հայցերով կայացված որոշումն անհապաղ տրամադրվում է դիմողին»:

Հոդված 5. Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասում «դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 30 օրվա ընթացքում» բառերը փոխարինել «դրա մասին սույն օրենքի 56-րդ հոդվածով սահմանված կարգով տեղեկանալու օրվանից սկսած մեկամսյա ժամկետում» բառերով:

Deleted: ից հետո լրացնել «բացառությամբ 52.1 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հայցերով կայացված որոշումների, որոնք ենթակա են բողոքարկման դրա մասին տեղեկանալու օրվանից սկսած 10 օրվա ընթացքում» բառերով

Հոդված 6. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված դիմումներով գործի քննության վրա: